ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ Վ. Գալոյան

«01» սեպտեմբեր 2023թ.

Digitally signed by GALOYAN VARDUHI 7705800268
Date: 2023.09.19 11:03:35 AMT

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՀՀ Գեղարքունիքի մարզիՀայրավանք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

3-րդ դասարան Դաղիկյան Կարինե Հրայրի

« 2023-2024 » ուսումնական տարի

Դասղեկի աշխատանքային պլան

Դաստիարակչական աշխատանքներ իրականացնելու ընթացքում դասղեկը կատարում է՝

• կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների՝ (փոխհարաբերություններ աշակերտների միջև, աշակերտների և ուսուցիչների միջև, ներդասարանական, միջդասարանական փոխհարաբերություններ) վերլուծություն, համակարգում, կարգավորում,

• դասարանական կոլեկտիվի կենսագործնեության փուլերի (կիսամյակ նայլն) և միջոցառումների (դասղեկական ժամեր, տեղեկատվական ռոպեներ, ստեղծագործական միջոցառումներ, մրցույթներ, ցուցահանդեսներ և այլն) պլանավորում, նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամփոփում, վերլուծություն,

• աշխատանք ծնողների հետ,

• Մանկավարժական աջակցություն աշակերտական ինքնավարության դասարանական մարմնին,

• աշակերտական օրագրերի և այլ փաստաթղթերի վարման կազմակերպում:

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրությունը

<u>Ուսումնական տարվա սկզբին</u>

• Կազմում է աշակերտների ցուցակը և ձևավորում կազմակերպչական անկյուն (սեպտեմբեր, առաջին

շաբաթ):

• Կազմակերպում է դասագրքերի ստացումը գրադարանից (սեպտեմբեր, առաջին շաբաթ):

• Ուսումնասիրում է աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները (առաջին քառորդ):

• Հավաքում է սպառիչ տեղեկություններ՝ լրացուցիչ կրթության հաստատություններում, դասարանի աշակերտների մասնակցության մասին (հոկտեմբեր):

• Աշակերտների շրջանում՝ նրանց ընդունակությունները զարգացնելու նպատակով, աշխատանք է տանում՝ բազմազան գործունեության ոլորտում (այդ թվում՝ լրացուցիչ կրթության) նրանց ներգրավելու համար (առաջին քառորդ):

• Աշակերտների հետ համատեղ կազմակերպում է դասարանի կենսագործունեության պլանի ձևավորում:

• Կազմում է դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը, համաձայնեցնում է այն դասղեկական մեթոդ միավորման ղեկավարի հետ և հանձնում է դաստիարակության գծով փոխտնօրենին (սեպտեմբեր):

Ամենօրյա աշխատանք

• Էլեկտրոնային դասամատյանում ստուգում է բացակայությունները

• Հետևում է աշակերտների արտաքին տեսքի պատշաճությանը:

• Հետևում է աշակերտների սնվելուն, և բարեկիրթ վարքին:

• Հետևում է դասարանում հերթապահության կազմակերպմանը:

Ամենշաբաթյա աշխատանք

• Աշակերտների օրագրերի ստուգում:

• Էլեկտրոնային դասամատյանի վարման վերահսկողություն:

• Դասղեկական ժամի վարում

• Դպրոցի, դասարանի վերահսկողությանն հանձնված տարածքի մաքրության վերահսկում:

• Այլ պլանավորված աշխատանքների կատարում:

Ամենամսյա աշխատանք

• Դասարանի կոլեկտիվը նախապատրաստում է, կազմակերպում է՝ համադպրոցական գործընթացներին մասնակցելու համար:

• Օգնում է դասարանական խորհրդին ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը:

• Պարապմունքներ է անցկացնում՝ ճանապարհային եթևեկության (ցածր դասարաններ), անվտանգ կենսագործունեության կանոնների (բարձր դասարանների) համար:

• Կազմակերպում է դասարանին հատկացված դպրոցական տարածքի ամենամսյա մաքրում:

• Հերթապահում է համադպրոցական միջոցառման ժամանակ (ըստ հերթապահության գրաֆիկի):

• Վերահսկում է իր դասարանի աշակերտների մասնակցությունը՝ խմբակներում, խորհուրդներում:

Ուսումնական քառորդի ընթացքում

• Օգնում է դասարանական խորհրդին կազմակերպել դասարանի կենսագործունեությունը (ընթացիկ պլանավորում, աշխատանքների կազմակերպում, քննարկում):

• Կազմակերպում է դասարանի հերթապահությունը դպրոցում (գրաֆիկի համաձայն):

• Հետևում է դասագրքերի պահպանմանը:

• Ճշտում է իր դասարանի աշակերտների՝ լրացուցիչ կրթության օղակներում մասնակցության մասին տեղեկությունները:

• Վարում է մանկավարժական խորհրդատվություն:

• Վարում է ծնողական ժողովներ:

• Կազմակերպում է ծնողական խորհրդի աշխատանքները, համաձայն վերջինիս պլանի:

Կիսամյակի վերջում

• Կազմակերպում է ուսումնական կիսամյակում դասարանի կրթադաստիարակչական

կենսագործունեության արդյունքների ամփոփումը:

• Դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենին ներկայացնում է էլեկտրոնային դասամատյանը և հաշվետվություն դասարանի առաջադիմության մասին

Ուսումնական տարվա վերջում

• Դասարանի ակտիվի հետ համատեղ, նախապատրաստում է դասարանի կենսագործունեության վերաբերյալ հաշվետվություն և կազմակերպում է ակտիվի վերընտրություն:

• Կատարում է (պատրաստում է) դասարանի կրթադաստիարակչական աշխատանքի ամփոփիչ վերլուծություն (ըստ հաշվետվության ձևի) և հանձնում է դպրոցի դաստիարակության գծով փոխտնօրենին:

• Կազմակերպում է դասագրքերի հանձնումը գրադարան:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)2023-2024 ուսումնական տարում երրորդ դասարանում սովորում են թվով 13 աշակերտներ/6 աղջիկ, 7՝ տղա/: Դասարանում տիրում է ուրախ, աշխույժ փոխզիջման մթնոլորտ, սիրով են հաճախում դպրոց ։

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուս. տարվա ընթացքում.

2023-2024 ուս. տարում նախատեսել ենք հետևյալ աշխատանքները:

2.1. Դասարանում ստեղծել կազմակերպչական անկյուն,ունենալ դասացուցակ,հերթապահություն, բժշկական արկղիկ:

2.2. Ամենօրյա աշխատանք. հետևել հաճախումներին ու կարգապահությանը , պահպանել առողջ ընկերական մթնոլորտ:

2.3. Համագործակցել ծնողների հետ կրթության կազմակերպման ու ընտանեկան դաստիարակության հարցում:

2.4. Ցուցաբերել ակտիվ մասնակցություն դասարանական ու համադպրոցական միջոցառումներին, կատարել ինքնուրույն աշխատանքներ:

2.5. Գնահատել սեփական ուժերն ու կարողությունները, ազատ արտահայտել կարծիքներ, կատարել հիմնավորումներ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն, Կազմակերպել զրույցներ հոգևոր արժեքների վերաբերյալ:Սերմանել սեր և հարգանք Քրիստոնեության և քրիստոնեական արժեքների նկատմամբ: Ըստ ուսուցչի տված հղումների՝ համացանցից օգտվելով, դիտել ֆիլմեր, քննարկել, ծանոթացնել Հայաստանի պատմամշակութային ժառանգությանը և տոներին:

3.2 Գեղագիտական դաստիարակություն. Զրույցների և ֆիլմերի միջոցով բարձրացնել գեղագիտական ճաշակը: Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել ,թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում :Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ :Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ: Կազմակերպել գեղեցիկը տեսնելու, գնահատելու մրցույթներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն. Մատաղ սերնդի հայրենասիրական ,քաղաքացիական պարտքի, հայրենիքին նվիրված

համակարգված գործընթաց: Հաճախակի կազմակերպել զրույցներ, դիտել հայրենասիրության թեմայով տեսաֆիլմեր , կատարել վերլուծություններ, քննարկումներ:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն. Առաջնորդվել «Առողջ մարմնում առողջ հոգի» կարգախոսով: Դրա գրավականն է բացօթյա պարապմունքներն ու մարզումները , խաղերը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն. Առաջնորդվել «Աշխատանքը մայրն է ամեն բարիքի»: կարգախոսով: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը: Գնահատել նյութական արժեքները, ունենալ ձգտում աշխատելու և արարելու:

3.6 Բնապահպանական դաստիարակություն. Ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի մաքրությանը,կանաչապատմանը, խնայել բնական ռեսուրսները: Բնապահպանական դաստիարակությունը կուլտուրայի հիմքն ու անբաժանելի մասն է, դրսևորել բարոյական չափանիշներ, վարքագիծ , բնության հետ փոխներգործություն:

3.7 Դպրոց-ընտանիք կապը: Պահպանել դպրոց-ընտանիք կապը: Կազմակերպել ծնողական ժողովներ,կատարել քննարկումներ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒսումնական շաբաթ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
I 01.09- 04.09-08.09	<<Գիտելիքի օր>> .Կազմակերպչական աշխատանքներ՝ .Աշխատանքային պլանի կազմում .Դասարանի ակտիվի ընտրություն .Հերթապահության սահմանում		Դասղեկ Աշակերտներ
II 11.09-15.09	.<<Խաչվերացի տոնը>> քրիստոնեական և համաժողովրդական տոն		Դասղեկ Աշակերտներ
III 18.09-22.09	.Սեպտեմբերի 21-ը ՀՀ անկախության օր		Դասղեկ Աշակերտներ
IV 25.09-29.10	.Ես հետիոտն եմ .Անվտանգ երթևեկության կանոնների հիշեցում		Դասղեկ Աշակերտներ
V 02.10-06.10	.Բացիկների պատրաստում .<<Ուսուցչի օր>> ցերեկույթ .Գրադարանավարի օր / այցելություն դպրոցի գրադարան		Դասղեկ Աշակերտներ Գրադարանավար Տեխնոլոգիայի ուսուցիչ
VI 09.10-13.10	. Աշակերտի օրվա ռեժիմը .Սանիտարական վիճակի ստուգում .Մասնակցություն բերքահավաքի		Դասղեկ Աշակերտներ
VII 16.10-20.10	.Պարտաճանաչություն և պատասխանատվություն /պատասխանատվության ձևավորում սեփական արարքների նկատմամբ/		Տնօրեն Դասղեկ Աշակերտներ
VIII 30.10-03.11	.Հոգատար վերաբերմունքի ձևավորում .Խնամքով վերաբերվել և պահպանել դպրոցական գույքը		Տնօրեն Դասղեկ Աշակերտներ
IX 06.11-11.10	. Մեդիագրագիտության շաբաթ .<< Նոյեմբերի 6-ը մարդու իրավունքների պաշտպանության օրն է>>		Դասղեկ Աշակերտներ ԹԳ և ՀԳ ուսուցիչ
X 13.11-17.11	.Իմ իրավունքները և պարտականությունները դպրոցում		Դասղեկ Աշակերտներ

XI 20.11-24.11	. Իմ իրավունքները և պարտականությունները տանը		Դասղեկ Աշակերտներ
XII 27.11-01.12	Եռամսյա աշխատանքների, ձեռքբերումների և թերացումների վերլուծություն և քննարկում		Դասղեկ Աշակերտներ
XIII 04.12-08.12	.Բնական աղետներ .Երկրաշարժի օր .Երկրաշարժից պաշտպանվելու կանոնները		Դասղեկ Աշակերտներ
XIV 11.12-15.12	.Ձմռան զարմանահրաշ աշխարհը .Ինչպիսի զգացումներ եմ ունենում երբ ձյուն է տեղում		Դասղեկ Աշակերտներ
XV 18.12-22.12	.Ամանորին ես ակնկալում եմ… .Ամանորյա միջոցառում		Դասղեկ Աշակերտներ ԴԱԿ
XVI 08.01-12.01	.Առաջին կիսամյակի արդյունքների քննարկում . Երկրորդ կիսամյակի անելիքները		Դասղեկ Աշակերտներ
XVII 15.01-19.01	.Սովորում ենք խաղալով, խաղում ենք սովորելով		Դասղեկ Աշակերտներ
XVIII 22.01-27.01	.Կրթության միջազգային օր .Կրթության կարևորությունը յուրաքանչյուրի կյանքում		Դասղեկ Աշակերտներ
XIX 29.01-02.02	. Հայոց բանակի օր		Դասղեկ Աշակերտներ ԴԱԿ
XX 05.02-09.02	. Հայրենիք, հայրենասիրություն		Դասղեկ Աշակերտներ
XXI 12.02-16.02	.Տեառնընդառաջ		Դասղեկ Աշակերտներ
XXII 19.02-23.02	.<<Մայրենիի օր>> .Թումանյանի ծննդյան օր։ .Գիրք նվիրելու օր		Դասղեկ Աշակերտներ
XXIII 29.02-01.03	.Քաղաքաշտպանության օր .Ծանոթացում տագնապի ազդանշաններին		Դասղեկ Աշակերտներ
XXIV 04.03-07.03	.Կանանց միջազգային օր . Բացիկների պատրաստում		Դասղեկ Աշակերտներ
XXV 11.03-15.03	. Գարուն է, .Գարնանային աշխատանքներում մեր մասնակցությունը		Դասղեկ Աշակերտներ
XXVI 18.03-22.03	.Սենյակային բույսերի խնամքը .Սենյակային բույսերի գեղագիտական և առողջության վրա ազդեցությունը		Դասղեկ Աշակերտներ

XXVII 01.04-05.04	.Կատակի օր Պաստառի պատրաստում		Դասղեկ Աշակերտներ
XXVIII 08.04-12.04	.Ավետման տոն		Դասղեկ Աշակերտներ
XXIX 15.04-19.04	.Ես և իմ ընկերը .Ընկերասիրություն		Դասղեկ Աշակերտներ
XXX 22.04-26.04	Եղեռն		Դասղեկ Աշակերտներ
XXXI 29.04-03.05	.Աշխատավորի օր .Աշխատանքի բարեբեր նշանակությունը		Դասղեկ Աշակերտներ
XXXII 06.05-10.05	.Հայրենական մեծ պատերազմ		Դասղեկ Աշակերտներ
XXXIII 13.05-17.05	.Ընտանիքի օր .Իմ ընտանիքը		Դասղեկ Աշակերտներ
XXXIV 20.05-24.05	Վերջին զանգ		Դասղեկ Աշակերտներ